

Յ Ի Շ Ա Տ Ա Կ

Հ. ՄԵՍՐՈՊ ՎՐԴ. ՃԱՆԱՇԵԱՆԻ

(1908 - 1974)

Անհուն վիշտով, յանուն Մխիթարեան Միաբանութեան, կու գանք հաղորդել մեր սիրելի հոգեկից ու բազմավաստակ Հ. Մեսրոպ Վրդ. Ճանաչեանի անակնկալ ու վաղահաս մահը, որ տեղի ունեցաւ՝ յետ կարճատեւ հիւանդութեան՝ Ապրիլի 13ին, Աւագ շաբաթ առաւօտ, Լիտոյի հիւանդանոցին մէջ:

Սրտի ծանր տագնապի մը հարուածին տակ, զօրացած Սուրբ Եկեղեցւոյ խորհուրդներով ու եղբայրակիցներու ջերմ աղօթքներով եւ գուրգուրոտ հոգածութեամբ, Հ. Մեսրոպ Վրդ. կնքեց իր մահկանացուն, պատնէչի վրայ կանգուն յառաջամարտիկի մը նման, «Յիսուս Որդի»ն ու գրիչը ձեռքին, իր գրական ու կրօնական արտադրանքի ամենաբեղուն շրջանին, խոր սուգի մատնելով հոգեկիցներս, ու մեզի հետ՝ հայ մշակոյթի անվերապահ սպասարկունները բոլոր:

Թաղման արարողութիւնը տեղի ունեցաւ Երեքշաբթի, 16 Ապրիլ, կէսօրէ ետք, Ս. Ղազարի մէջ, մասնակցութեամբ սգակից բազմաթիւ հայ եւ օտար բարեկամներու, նախկին սաներու, որոնք փութացած էին Միլանոյէն, Փատովայէն, Վենետիկէն, յարգանքի վերջին տուրքն ընծայելու անխոնջ վաստակաւորին: Դադաղը ուսամբարձ եւ արտասուազին կրեցին՝ փոխն ի փոխ՝ Մուրատ-Ռափայէլեան Վրժ.ի աշակերտները և Մխիթարեան Տպարանի իտալացի աշխատաւորները, որոնց խանդավառիչ ոգին էր եղած հանգուցեալը՝ երկար տարիներ:

Հ. Մեսրոպ Վրդ. Ճանաչեան ծնած էր Անջարա, 1908ի Յունուար 11ին: Ճիշտ քսան տարեկանին՝ ուխտերով կ'անդամակցէր Միաբանութեանս, Սուրբ Ղազարի մէջ բոլորելով իննամեայ աշակերտութեան շրջան մը: 1934ին, իմաստասիրութեան ու աստուածաբանու-

Հրատարակութիւն Ս. Ղազարի Հայկական Կաճառին

Publication de l'Académie Arménienne de Saint-Lazare - Venise

Կը հրատարակուի «Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան» մրցատու

Publié avec le concours de la «Fondation Calouste Gulbenkian»

1508-75

Թեան համալսարանական վկայականներով օժտուած, քահանայական ձեռնադրութիւն կը ստանար. 1937-39 կը յաճախէր Սորպոնի «համեմատական գրականութեան» դասընթացներուն: Այդ օրերէն աս-դին, շուրջ քառասնամեակ մը ամբողջ՝ կը ծառայէր Միաբանութեան եւ Ազգին՝ ուսուցչական, կրթական, գրական ու հրատարակչական մեծղի եւ յարաճուն գործունէութեամբ վարելով Մուրատ-Ռափայէլեանի մէջ նախ Ուսումնապետի (1939-42), ապա Տեսուչի պաշտոնները (1950-52), յաջորդաբար նաեւ Սեւրի Մուրատեանի Տեսչութիւնը (1952-53): Երկար տարիներ ձեռնհասօրէն կը վարէր «Բազմավէպ» հանդէսի խմբագրութիւնը (1942-52, 53-56, 70-73), Միւթարեան Տպարանի Տեսչութիւնը (1955-69), «Հայ Ընտանիք» ամսաթերթի խմբագրութիւնը (1970-73), երեք տարիէ ի վեր Միւթարեան Կաճառի (Ակադեմիայի) Ատենապետն էր:

Քսանեւհինգ հատորոց գրական հսկայ ժառանգութիւն մը կը թողու Հ. Մեսրոպ Ճանաչեան. քերթուածներ, գրական ուսումնասիրութիւններ, հայ արդի գրականութեան պատմութեան վերաբերող կոթողային գործեր, մանրակարգութեան մասին հսկայածաւալ հատորներ, «Գեղունիքներ», «Բազմավէպ»ի սքանչելի բացառիկներ, հայ հեղինակներէ իտալերէն թարգմանութիւններ, Միւթարեան մայրավանքի կամ դպրոցներու վերաբերող գրքոյկներ: Այդ բոլորէն չորսը՝ լոկ 1973 թուականի շրջանին լոյս են տեսած:

Ունի քսան հատոր ալ խմբագրած աշխատանքներ, «Գրական Ցուրբեր»ու շարքերէն կամ Միւթարեան այլ հեղինակներու գործերէն: Ու դեռ անթիւ արժէքաւոր յօդուածներ, ուսումնասիրութիւններ, խմբագրականներ, գրախօսականներ, «Բազմավէպ»ի էջերուն մէջ ցրուած:

Կը դասաւանդէր Մուրատ-Ռափայէլեանի մէջ, կը դասաւանդէր վանքին մէջ. բայց ի՞նչ խանդավառ նուիրումով, ի՞նչ երկիւղած հաւատքով: Կը դասաւանդէր գրաբար՝ իտալացի համալսարանականներուն: Կը խմբագրէր: Կ'օգտագործէր իր կեանքի ամէն մէկ վայրկեանը:

Վերջին աշխատանքն եղաւ Ս. Ներսէս Ծնորհալիի շարականներու, հոգեւոր երգերու եւ տաղերու իտալերէնի վերածումը, շուրջ 230 էջոց գեղեցիկ ու շնորհագեղ թարգմանութիւն մը, որուն նուիրեց իր թանկագին ժամերը, հոգեկան անճառ յափշտակութեան մէջ, Մեծ Հայրապետին մահուան 800ամեակին առիթով: Կեանքի վերջին օրերուն՝ սկսած էր նոյն հաւաքածոն թարգմանել Ֆրանսերէնի. ձեռնարկած էր գրելու թատրերգութիւններ՝ հայ պատմական անցեալէն: Կը խորհէր միջոցներ հայապահպանումի, սփիւռքահայ մեծ միութեան մը երազով յուսալի:

Ու տակաւին ծրագրերն են անհատնո՛ւմ...

Հայ մշակոյթի ծառայութեան նուիրուած անբասիր եկեղեցականն էր Հ. Մեսրոպ Ճանաչեան, աստուածավախ ու երկիւղած կրօնաւոր, Միաբանութեան ամէնէն կորովի անդամներէն մէկը, որ գիտէր աշխատանքն աղօթքի վերածել, որ չէր գիտեր յոգնիլ, որ կը սիրէր ինչ որ մեծ է ու վսեմ, որ պաշտամունքն ունէր գեղեցիկին ու ճշմարիտին:

Միւթարի Տան հաստաբուն կաղնին էր անիկա, որ ահա կը տապալի յանկարծ, իր ոյժերու առոյգ ու կենսունակ թարմութեան մէջ. տերեւաշատ, պտղալիճ, արդիւնաւէտ...:

Արցունքը կ'ողողէ մեր աչքերը. գրիչը կը կասի:

Հ. Մեսրոպ Ճանաչեան ոչ եւս է. փակ են յաւէտ աչքերն այն կենսուրախ, անշարժ է աջն այն օրհնեալ ու բազմավաստակ, որ Մաշտոցեան խանդ մը ունէր մշտաժիր, Ծնորհալիէն առած էր հրայրք ու սլացք:

Ս. Ղազարի աղօթանուէր ու խնկարոյր նոճիներուն ներքեւ, մեծ Ալիշանին հետ գիրկընդխառն, հանդէ՛ խաղաղ, սիրելի՛ Հ. Մեսրոպ, միաբան վաստակաւորներու եւ վաստակաւոր միաբաններու կողքին, անճառ յարութեան յոյսով առջուն:

Հանդէ՛, Վարդապետ, երանաւէտ փառքերուն մէջ արքայութեան, ուր Մաշտոց եւ Ծնորհալի յաւերժական դովքը կ'երգեն, մեր հայրենի շարականին քնարով ոսկեղէն, արարչական անճառ Լոյսին:

Համակամ՝ աստուածային կամքին, արցունքով ու յարգանքով կը խոնարհինք քու թարմ շիրիմիդ առջեւ:

Պայծառ օրինակդ աշխատանքի ու նուիրումի՝ կտակ է սրբադան, մեղի համար, միւթարութիւն ու բալասան հոգեպարար, եւ քաջալեր հզօր՝ ապագայ սերունդներուն:

Վեմետիկ, Ս. Ղազար

13 Ապրիլ, 1974

Խմբ. «ԲԱԶՄԱՎԷՊ»ի